



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՐՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Խորհուրդը, յանձինս Հայ Առաքելական, Ղրպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու, Երեքշաբթի, 13 Դեկտեմբեր 2011ին, իր հերթական ժողովը գումարեց Ս Մարիամ եւ Ս. Աթանաս Եկեղեցւոյ մէջ, Նորթթիք:

Առաւօտեան ժամը 11:00ին, Առաջնորդ Սրբազան

Հայրեր՝ Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Գերշ. Տ. Եւոճին Քափլան (Ասորի Ուղղափառ), եւ Գերշ. Տ. Սրապիոն Եպսկ. (Ղրպտի Ուղղափառ), իրենց ընկերակցող եկեղեցական հայրերու մասնակցութեամբ կարճ արարողութիւն մը կատարելէ ետք, անցան տարեկան ծրագրի մշակման աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Հովիւ, Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան եւ Զրեսենթա Հովիտի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Ղեւոնդ Քիւյ. Զիրագեան:

Ժողովը քննարկեց յառաջիկայ միատեղ ծրագիրներու եւ աշխատանքներու կարելիութիւնները: Ապա լսեց Ուղղափառ եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու եւ երիտասարդաց յանձնաժողովներու զեկոյցները:

Ժողովը գնահատանքով արտայայտուեցաւ միջ-կիրակնօրեայ դպրոցներու յանձնախումբին տարած աշխատանքներուն, ինչպէս նաեւ կազմակերպած միջ-կիրակնօրեայ դպրոցներու տարեկան հաւաքին, որ տեղի ունեցած էր Շաբաթ, 19 Նոյեմբեր 2011ին, Ս. Եփրեմ Ասորի Ուղղափառ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, որուն մասնակցեցան 160 աշակերտներ:

Թելադրուեցաւ Ուղղափառ Եկեղեցիներու Միջ-Երիտասարդաց յանձնախումբը աշխուժացնէ իր գործունեութիւնը եւ նախորդ տարիներու նման, յառաջիկայ ամիսներու ընթացքին, դաստիարակչական ծրագրով օգտաշատ հաւաքներ կազմակերպէ:



արդէն իսկ ծրագրումի նախնական աշխատանքներու ձեռնարկած են, լաւագոյնս մասնակցելու համար Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու եւ միջ-երիտասարդական հաւաքներուն:

Հաւաքական ճաշով, յիշատակի հաւաքական նկարով եւ աղօթքով փակուեցաւ ժողովը:

Յայտնենք, որ Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակը եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Վարիչ Մարմինը, հովանաւորութեամբ եւ գլխաւորութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր,

PRELATE PARTICIPATES IN COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS MEETING



On Tuesday, December 13, 2011, the Council of Oriental Orthodox Bishops held their quarterly meeting at St. Mary and St. Athanasius Coptic Orthodox Church in Northridge, hosted by H.G. Bishop Serapion.

The day began with a prayer service inside the Church led by the Prelates H.E. Archbishop Moushegh Mardirossian, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G.

Bishop Serapion, and with the participation of clergy members from the three Churches.

Alongside the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Fr. Razmig Khatchadourian, and Rev. Fr. Ghevont Kirazian participated in the meeting.

The meeting focused on collaborative efforts and joint events in the coming year, and after hearing reports on Sunday School and Youth activities, made the following comments.

(1) The Council commended the activities of the Sunday School committee, including their most recent endeavor, the Oriental Orthodox Churches 7th annual Bible competition in which 160 youth participated. The event was held on Saturday, November 18, 2011 at St. Ephraim Syriac Orthodox Cathedral in Burbank.

(2) The Council will work to reorganize and revitalize the Youth committee, and hopes they will begin to hold events regularly as in the past.

The meeting concluded with a lunch reception.